ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1428 10.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 2922
14 07 2014թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը Ձեր 03.07.2014թ-ի թիվ 2/2-1-1591 գրության Թերություններ բաժնի 1-ին և 2-րդ պարբերությունների վերաբերյալ պարզաբանում ենք, որ երբ Դիտորդական խումբը իր ընթացիկ գրության մեջ նշել էր, որ

1. <<Ի գիտություն ձերբակալվածների հարազատներին>> պաստառը փակցված է եղել հերթապահ մասում՝ քաղաքացիներին հասանելի տեղ՝ նկատի չի ունեցել, կոնկրետ հերթապահ մասի տարածք, այլ ոստիկանության բաժնի մուտքը, որտեղ փակցված են տարբեր հայտարարություններ, որը գտնվում է հերթապահ մասի հսկողության ներքո:

2. Պարզաբանենք, որ ոչ Ձեր կողմից նշված միջանցքում և ոչ էլ թեկուզ հերթապահ մասում պաստառը փակցված չի եղել :

3. Դիտորդական խումբը համաձայն է, որ <<Ի գիտություն ձերբակալվածների հարազատներին>> պաստառը ոչ մի իրավական ակտով նախատեսված չէ տվյալ վայրերում փակցնելու համար, բայց պարզաբանենք, որ Դիտորդական խումբը 2011թ-ին ստացել է նախկին ՀՀ ոստիկանապետի և փոխոստիկանապետի համաձայնությունները պաստառները փակցնելու համար և հիմք է ընդունվել ձերբակալվածների և նրանց հարազատների իրավունքների իրազեկումները բարձացնելու նպատակով:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՏՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄՈՒՏՔԱԳՐԱՄԱՆ
ՄՏԻՑ № 5599
«14» 07 2014թ.

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-_____ «_____»_____ 2014թ.

2/2-1-1767
21.07.14թ

Ձեր 10.07.2014թ. թիվ 2621/1428 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ մայիս ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի և Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժինների ՁՊՎ-ներ կատարած այցելությունների ընթացքում արձանագրվել էր, որ նշված բաժինների հերթապահ մասերից դիտորդների խմբի կողմից տրամադրված՝ <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը հանվել է միտումնավոր, որպեսզի քաղաքացին չկարողանա լիարժեք տիրապետել իր իրավունքներին և զերծ մնա դիտորդների խմբին դիմելուց:

Վերոգրյալի վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից 26.06.2014թ. թիվ 2/2-1-1542 և 03.07.2014թ. թիվ 2/2-1-1591 գրություններով տրվել են հիմնավոր և սպառիչ մեկնաբանություններ, որ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում պաստառը նախկինում փակցված է եղել հերթապահ մասում, սակայն հետագայում այն տեղափոխվել և փակցվել է բաժնի միջանցքում՝ ձերբակալվածների հարազատների համար ավելի հասանելի և տեսանելի տեղում, իսկ Սիսիանի բաժնի հերթապահ մասից այն ժամանակավորապես հանվել է՝ հերթապահ մասում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու կապակցությամբ, որը կրկին փակցվելու է վերանորոգման աշխատանքների ավարտից հետո:

Այդուհանդերձ, դիտորդների խումբը դարձյալ պնդում է, որ բաժինների միջանցքներում և հերթապահ մասերում պաստառները փակցված չեն եղել:

Ներկայիս դրությամբ պաստառները փակցված են նշված բաժիններում՝ տեսանելի տեղերում:

Հարկ է նշել, որ դիտորդների խմբի կողմից ներկայացված հաշվետվություններին ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները տրվում են ՁՊՎ-ներում կատարված ստուգումների, անցկացված ծառայողական քննությունների, ինչպես նաև կոնկրետ փաստերը հաստատող

փաստաթղթերի առկայության հիման վրա: Հետևաբար, նույն հարցադրումների շուրջ կրկնակի կամ երրորդ անգամ մեկնաբանություններ ներկայացնելը անիմաստ է:

Ինչ վերաբերվում է պաստառները ոստիկանության բաժիններում և ՁՊՎ-ներում փակցնելու վերաբերյալ նախկինում ՀՀ ոստիկանության ղեկավարության համաձայնությունը ստանալուն, ապա ներկայումս էլ ոստիկանությունը պաստառների առկայությանը դեմ չէ: Ավելին, ՀՀ ոստիկանության համակարգի բոլոր գործող ՁՊՎ-ների վարչակազմերին բանավոր հրահանգավորվել է, որ նշված պաստառները փակցվեն բաժինների միջանցքներում՝ տեսանելի տեղերում:

Միաժամանակ հայտնվում է, որ վերոնշյալ պաստառները դիտորդների խմբի կողմից տրամադրվել են դեռ 2011թ-ին, որոնք արդեն մաշվել և կորցրել են իրենց գունային որակները: ՈՒստի խնդրվում է ՁՊՎ-ներ կատարվող այցելությունների ընթացքում ՁՊՎ վարչակազմերին տրամադրեք Ձեր իսկ կողմից մշակված <<Ի գիտություն ձերբակալվածներն և հարազատներին>> պաստառը:

ՀՀ ոստիկանության շտաբ